ՏԵՂԵԿԱՆՔ

Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 165. Ազգային ժողովի աշխատանքների լուսաբանումը

1. Ազգային ժողովը կարող է ունենալ իր տպագիր օրգանները:

2. Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների հրապարակային նիստերը, ինչպես նաև խորհրդարանական լսումներն առցանց հեռարձակվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Ազգային ժողովի նիստերի և խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքով կարող են ուղեկցվել հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ:

3. Կանոնակարգի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերում նշված նիստերի տեսագրություններն Աշխատակարգով սահմանված կարգով՝ հաջորդ օրն ամբողջությամբ ցուցադրվում են հեռուստատեսությամբ: